



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. ԵՏԱ. Բ. Ե. Բ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՀԱՐԿԱՌՐՈՒԹԻՒՆԸ



աղաքակիրթ ազգաց ընթացքն ու յառաջագիմութիւնը տեսնող մարդը երբ աչքը այնպիսի ազգի մը վրայ դարձնէ որ անոնցմէ շատ ետեւ մնացեր է, ուրիշ ամէն խեղճութիւններէն աւելի աչքին զարնող պակասութիւն կգտնէ այն ազգին տգիտութիւնը: Վասն զի թէ որ յառաջագէտ ու ծաղկեալ ազգի մը հարկաւոր յատկութիւններէն մէկն է աւելի տեսական քան թէ նիւթական բարեպաշտութիւն՝ առանց կրօնամոլութեան եւ աւելորդապաշտութեան, — յետամնաց ու տգէտ ազ-

գին վտանգ է ունենալու աւելի նիւթական քան թէ տեսական բարեպաշտութիւն՝ հանդերձ կրօնամոլութեամբ եւ աւելորդապաշտութեամբ, թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է մարդավարութիւն, տգէտ ազգին պակասութիւնը պէտք է լինի կոպտութիւն. թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է ընթերցասիրութիւն, տգիտինն է կարգալ գրելու ատելութիւն, թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է ամէն բանէ խելք սովորիլը, տգիտինն է ամէն բան արհամարհելն ու իր գիացածին (այսինքն բան չգիացածին) վրայ գոհ լինելը. թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է հասարակաց օ-

գուտը անձնականէն վեր գնելը, տգիտինն է՝ անձնական շահը ամէն բանէ առաջ ու ամէն բանի մէջ վնասուելը. թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է աշխատանքի սէրն ու օրինաւոր բարեկեցութեան գովելի ջանքը, տգիտինն է ծուլութիւն, եւ խեղճ ողորմելի ապրուստով գոհ լինելը. մէկ խօսքով՝ թէ որ յառաջագէտ ազգին յատկութիւնն է ուրիշ իրեն նման ազգերէն ետ չմնալու փափաքանօք՝ նոր նոր կարգադրութեանց ետեւէ լինելը, տգիտինն է՝ պաղ աչքով կեցած նայիլը ուրիշներուն վրայ, եւ յուսահատ կերպով իւր գլխուն վրայ գումարիլ անճրկիլը: Ուստի եւ զարմանք չէ որ տգէտ ազգի մը մէջ սակաւագիւտ բաներ լինին՝ արժանաւոր եկեղեցականներ, խոհական իշխանաւորներ, արդարասէր դատաւորներ, հայրենասէր զինուորներ, հնարագէտ արհեստաւորներ, մեծագործ վաճառականներ, խօսքի տէր սեղանաւորներ, բարեկրօն դատաւարակներ, քաջուշիմ վարժապետներ, քաղաքագէտ մեծամեծներ, անուանի մատենագիրներ, գերահռչակ քարոզիչներ, խաղաղարար իմաստուններ, կենցաղօգուտ գրքեր եւ բարեկարգ դպրոցներ: — Ընդհանրապէս, աչքդ որ գին դարձնես՝ կտեսնես աշխարհականի նման եկեղեցական մը, աղքատամիտ փցուն իշխան մը, կաշառասէր ցած դատաւոր մը, անձնգիւր վատ զինուորական մը, կարճամիտ խեղճ խանութպան մը, ծանծաղամիտ տգէտ վարժապետ մը, կռուասէր շաղակրատ մը, բերնովը մեծ մեծ ջարդող ու գործով հակառակը ցուցնող ազգասէր մը...

Թէ որ այս ամենայն խեղճութեանց պատճառ տգիտութիւնն է, ապա ուրեմն միայն տգիտութիւնը փարատելով է որ կարելի պիտի լինի այս խեղճութիւններն ալ օրէ օր պակսեցնել ու վերցնել ազգին մէջէն: Ապա ուրեմն ամենահարկաւոր բան է ազգին մէջ բարեկարգ դպրոցները շատցնել, ու արդէն եղածները հետ զհետէ աւելի բարեկարգել: Վասն զի ուսման եւ գիտութեան լոյսը բարեկարգ դպրոցներէն միայն կճագի, եւ անդգալի կերպով կը ստաւորէ՝ կերպարանափոխ կընէ ամբողջ ազգերը, ինչպէս որ խիստ շատ փորձերով անսնուած է մեծամեծ ազգաց վրայ:

Վայրասլար չէ (թէ վէճելի չէ) ամէն ան-

գամ դպրոցի անունին հետ քառեկարգ բառն ալ դնելնիս. վասն զի անկարգ դպրոցը ազգին տգիտութիւնը չփարատելէն զատ՝ անոր որդւոցը չարութիւն եւ անկարգութիւն սովորելու տեղ մը կը աւանայ: Եւ այսպիսի դպրոցներ երանի թէ քիչ լինէին մեր ազգին մէջ, երանի թէ գրեթէ ամէն տեղ ալ չգտնուէին: — Թող չհարցընէ մէկը թէ արդեօք անկարգ դպրոց ըսելով՝ ինչ կհասկընամք. վասն զի այս տեղ միաք չունիմք այնպիսի դպրոցներուն ամէն անկարգութիւններն ալ մէջ բերելու: Բաւական համարիմք այսքանս ըսել առ այժմ՝ որ մի թէ անկարգ ըսուելու արժանի չեն իրաւամբ այն ամենայն դպրոցները՝ ուր որ աշակերտները կղբրկուին իրենց ծնողքներէն՝ միայն անոր համար որ տունը չարութիւն չընեն, ուր որ տղաքը իրարմէ կսովորին այն ամենայն չարութիւններն որ տունը կենային նէ թերեւս պիտի չգիտնային. ուր որ վարժապետ մը կեցած է՝ ոչ թէ իբրեւ սիրելի հայր եւ ինամօտ դատաւարակ, այլ իբրեւ գարշելի դահիճ եւ անգութ բռնաւոր. ուր որ տղաք կարգալ ու գրելը կսովորին՝ ոչ թէ իբրեւ սքանչելի արուեստ եւ սիրելի զբօսանք, այլ իբրեւ պատիժ պատուհասի՝ եւ անտանելի աշխատանք. ուր որ խեղճ տղան աչքը որ պատն որ դարձրնէ՝ կամ քսք կտեսնէ՝ ամիկներուն զարնուելու, կամ փայտիս՝ ըղունկները թափելու, կամ գաւազան՝ ոսկորները կոտրուելու, կամ կարմիր սափդեղ՝ բերնին տրորելու, կամ մանր ֆարեր՝ ծնկուրներուն տակը ցանելու, կամ իշու ակակներ՝ գլուխը անցնելու, կամ նախաստակն անուններ՝ կուրծքէն կախելու. — ո՞ր մէկն ըսեմ:

Մի թէ անկարգ ըսուելու արժանի չեն այն դպրոցները՝ ուր որ տգէտ ողորմելի՝ կռալիտ եւ անկիրթ վարժապետին մէկը՝ դաւադանը ձեռքը՝ 30 կամ 60 աշակերտի գլուխը անցած, մի առ մի առջեւը կկանչէ խեղճ տղաքը, մաշուած աղոտոած հեգեբերնի՝ այսինքն փոքր սաղմոսի, կամ պատուած բղբկտած մեծ սաղմոսի մը մէկ տունը միայն կմկրմալով ու օխալ-մխալ կկարգացընէ մէկ անգամ, ու կամ համարը չգիտցածին համար ծեծելէն ետքը, կամ գիտցողին նոր տուն մըն ալ դաս տալէն ետքը՝ տեղը կը ճամբէ, որ երթայ հատի, ու իբր թէ հին

կամ նոր համարը սերտե՛ մինչեւ վաղուան օրը. իսկ նա՛ թէ որ ծեծ կերաւ՝ լալով ողբալով, թէ որ դասը գիտցաւ՝ խնամնտալով տեղը կգառնայ. հոն ալ, կամ քովինին հետ չարութիւն կընէ, կամ թէ իրաւամբ ձանձրացած՝ հոգին բերանը եկած՝ պարապ կկենայ յօրանջելով, կամ ջուր խմելու երթամ ըսելով՝ ասոգիս անգին կտընտընայ ատեն կանցընէ, իրիկուն լինելուն կապատէ որ ագասի խեղճը այն անտանելի կեանքէն, այն սոսկալի տանջանարանէն, ու վաղէ երթայ տունը, ցատքըտէ, վագուրուտէ, կանչուրուտէ, քարեր նետէ, ապակիներ կտարտէ, մէկուն մէկալին հետ ծեծկուի, տունը տակն ու վրայ ընէ, մօրմէն հաղարումէկ անէծքներ լսէ, ու քանի որ հայրը տուն չէ գարձած՝ ամենեւին հոգ չընէ, գիտնալով որ երկրորդ օրը ուզէ չուզէ նորէն իրեն պատժարանը պիտի երթայ:

Մի՛ թէ անկարգ ըսուելու արժանի չեն այն դպրոցները՝ ուր որ վարժապետը հարըստի տղուն ցած աչառութիւն (խաթըր նայիլ) կընէ, աղքատի տղուն դառն դահճութիւն, ուր որ վարժապետը աշակերտներէն ետքը կուգայ տնէն կամ սրճարանէն (խահուէէն), եւ աշակերտներէն առաջ կերթայ տունը կամ գինետունը. ուր որ վարժապետը կանչով ու ճիւղով՝ անէծքով յիշոցքով միայն կխօսի աշակերտաց հետ, ու իրեն ոչ թէ հովիւ անմեղ գառանց՝ հապա գայլ գիշախանձ լինելը անգադար կցուցընէ, մէկուն ծեծ քաշելով, մէկալին մազը փետելով, մէկուն երեսը թքնելով, մէկալին ապտակներ իջեցընելով, մէկուն քիթը արիւնոտելով, մէկալին թեւը տեղէն հանելով, մէկուն բռնցի (եռամբուխով) թմբելով, մէկալին աքացի (թէքմէով) վայն իվրան բերելով: Վայ գլխուն այնպիսի վարժապետին,

եւ հազար վայ այնպիսի դպրոցին. ախառ տղոց ծնողացը ստըկին եւ մեղք մեր պատուական բայց ողորմելի աղգին, որ գուցէ գեռ շատ տեղ այնպիսի դպրոցներէ կապատէ իրեն լուսաւորութիւնը:

«Դպրոց պէտք է, դպրատուն պէտք է, վարժատուն պէտք է, ուսումնարան պէտք է» խօսքերը սովորական բան մը դարձեր են այժմեան ժամանակա շատ մարդկանց բերանը. եւ դպրոցի յարգը գիտցող չգիտցող՝ առ հասարակ այս գովելի ազադակը կվերցընեն. բայց թէ հարցընես որ ինչ տեսակ դպրոց պէտք է, պատասխան տալու տեղ՝ իրարու երես կնային: Քաղց մըն է որ կզգան խեղճերը բնականապէս ու ժամանակիս բերմունքէն, եւ իրաւունք ունին. բայց թէ ինչ պիտի ուտեն որ անունդ առնուն՝ իրենք ալ չեն գիտեր: Եթէ հարցընես՝ գոնէ ընդհանրապէս՝ թէ ինչ տեսակ դպրոց կուզէք, անկարգ թէ բարեկարգ, «իհարկէ բարեկարգը կուզեմք, էն ազէկը կուզեմք» կազաղակեն, բայց թէ ինչպէս կլինի բարեկարգ դպրոցը՝ գուցէ իրենց երազին մէջ ալ տեսած չեն, ուստի եւ մեղադրութենէ ազատ են:

Կարժէ ուրեմն որ քանի մը յօդուածներով ամսագրոյս մէջ դպրոցներու բարեկարգութեանը վրայ խօսեմք, յուսալով որ ոչ սակաւ օգուտ քաղեն մեր խօսքերէն թէ բարեսէր ծնողք եւ թէ վարժապետը:

Առ այժմ՝ կրկնեմք մեր իսկզբան ըսածը թէ մեր աղգին յառաջադիմութեանը գըլխաւոր պատճառ ու լուսաւորութեանը գըլխաւոր աղբիւր՝ բարեկարգ դպրոցները պիտի լինին, առանց այսպիսի դպրոցներ բանալու, կամ թէ առանց արգէն եղածները բարեկարգելու ամենեւին չյուսամք որ աղգերնիս լուսաւորուի ու առաջ երթայ:

ԲԱՐՅԱԿԱՆ.

Ուսումը մարդուս մտքին համար է, կրթութիւնը՝ բոլոր անձին համար. ուսման նպատակն է ճշմարտութիւնը գտնել, իսկ կրթութեան նպատակը՝ թէ ճշմարտութիւնը, թէ բարին, թէ օգտակարը եւ թէ վայելուչը ձեռք ձգել: Ուսումը առանց կրթութեան անօգուտ է, երբեմն ալ վնասակար: Պառաւ կնկան մը տուած կրթութիւնը շատ աւելի օգտակար կընայ լինել, քան թէ երեւելի փիլիսոփայի մը տուած ուսումը: